

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Ելեկտրոնային տարբերակները կայթում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утп түшілтөрө - Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐՄԵՆ ԶԱԼԻՆՅԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ 2004

ԱՐՄԵՆ ԶԱԼԻՆՅԱՆ

ԱՐՅԱՆԱՎԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԽՐԱՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

«Օրենք և իրականություն» հրապարակչություն
ԵՐԵՎԱՆ 2004

Զալինյան Ա.Մ. – իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԼՂՀ Նախագահի պետական հարցերով խորհրդական

Զալինյան Ա.Մ.

- Զ-165 Արցախսահյության պետականության պարմահրավական զարգացումը. - Երևան. «Օրենք և իրականություն» հրատարակչություն, 2004. - 42 էջ:

Մարենագրական աղբյուրների, արխիվային վավերագրերի, փաստաթղթերի և գիտական ուսումնասիրությունների հիման վրա աշխատությունում վերլուծաբար ամփոփ ներկայացված է արցախսահյության պետականության պարմահրավական զարգացումը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Աշխատությունը նախապեսված է ոչ միայն մասնագետների, հետազոտողների, դարաբառյան հիմնահարցով հետաքրքրվողների, այլև ընթերցողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 67.99(2ኛ)+63.3(2ኛ)

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Արցախ, Լեռնային Ղարաբաղ...

Արդեն 16 փարի է ինչ այս անվանումները
հայության համար դարձել են ազգային վերածննդի,
ազագագրական հաղթական պայքարի խորհրդանիշ,
որոնց արդյունքն է այսօր

Լեռնային Ղարաբաղի Նանրապեկության գոյությունը:

Յուրաքանչյուր ժողովրդի պարմություն՝
դա նրա բնութագրին է, ուր դրսևորվում են ժողովրդի ոգին,
արժեհամակարգը, դավանվող գաղափարախոսությունը,
դարերի ընթացքում ձևավորված իրավական միգքը՝
ձգփումներով և պարկերացումներով հանդերձ:

Պարմությունից պետք է դասեր քաղել,
անհրաժեշտ և ճիշդ հետևողական անել,
քանի որ պարմությունը լոք անցյալի՝
պարմության համար չէ,

այլ առավելապես ներկայի և ապագայի համար:
Չհավակնելով, բնականաբար, Նայասրան աշխարհի և նրա
մի հարվածի՝ Արցախ երկրամասի հազարամյակների
պարմության մանրամասների շարադրանքին,
փորձել ենք մարդենագրական աղբյուրների,
արխիվային վավերագրերի, փաստաթղթերի և
գիտական աշխատությունների հիման վրա
վերլուծաբար ամփոփ ներկայացնել արցախսահյության
պետականության պարմահրավական զարգացումը՝
հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝
ընգծելով անցյալի և ներկայի միջև կապը,
ինչն ունի կարևոր նշանակություն
դարաբառյան ազագագրի գրեսանկյունից:

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՒՐԱՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դեռևս հնագոյն ժամանակներում Արցախը (Ղարաբաղը) ներառված էր հայկական պետականության ուղեծրում: Մ.թ.ա. IX – VI դարերում այն գլուխում էր Վանի թագավորության կազմում¹: Մ.թ.ա. VII-ῃ վերջին փարածաշրջանում կապարվեցին մի շարք զարգացումներ, որոնք զգալի ազդեցություն թողեցին Հայկական լեռնաշխարհի քաղաքական կացության վրա: Մ.թ.ա. VI դարի 80-ական թվականներին, հանձինս Երվանդունիների, հիմնվում է նոր թագավորական դինաստիա: Նոր թագավորության կազմում, ի թիվս այլ փարածքների, մինում էին նաև Արևելյան Հայաստանի մաս կազմող Արցախ և Ուփիք երկրամասերը²: Նման քաղաքական կացությունը պահպանվեց նաև Արփաշեսյանների և Արշակունիների գահակալության շրջանում՝ մինչև մ.թ. V դարը³: Արշակունիների գահակալության վերջին շրջանում, երբ գահընկեց արվեց Արփաշեսը (V դարի սկիզբ), թագավորությունը մասնաբլում է առանձին իշխանությունների. մասնաբնում է Մեծ Հայքը, թագավորության կազմում մնում է Միջնաշխարհը (կենտրոնական Հայաստանը՝ մի շարք նահանգներով: Այլ կերպարանք է սրանում քաղաքական կյանքը Արևելյան Հայաստանում, որը դառնում է Սասանյան Պարսկաստանից կախում ունեցող մի երկիր՝ իր ներքին ինքնավա-

րությամբ⁴: Արշակունյաց թագավորության անկումից հետո (428թ.) Արցախ և Ուփիք նահանգներն ընդգրկվում են նորասպեկտ Վղվանից մարզպանության կազմում: Պարսկական գիրապետության նկատմամբ անհանդուրժողականությունը առաջացնում է հակապարսկական մի շարք ընդվզումներ, ապստամբություններ (մասնավորապես՝ 451թ. Ավարայրի ճակարամարդը), որոնք ի վերջո հանգեցնում են վարչաքաղաքական նոր կացութածնի, որի շրջանակներում Արցախը ձեռք է բերում մասնակի ինքնուրույնություն՝ փարածքում ծևավորվում է հայկական նոր թագավորություն, որը հայկին է որպես Հայոց Արևելյաց կողմանց Աղվանից թագավորություն⁵: Պարսից արքա Հազկերպի մահից հետո (457թ.) թագավոր Վաչե Առանշահիկը⁶ պարսիկներին դուրս է քշում թագավորության սահմաններից: Թագավորության համար նա կառուցում է Պարփակ (ներկայիս՝ Բարդա) մայրաքաղաքը: Վաչեին փոխարինում է եղբորորդին՝ Վաչագանը, որի ժամանակ Արցախի հայկական թագավորությունն իր մեջ էր ընդգրկում ոչ միայն Արցախ և Ուփիք նահանգները, այլև Կուրի ձախակինյա Կամբեճան գավառը (ներկայիս՝ Կուրի ձախակինյա Վրաց-ադրբեջանական սահմանի մով): Բուն Մեծ Հայքում հայկական պետականության բացակայության

⁴ Սակար Բարխուդարեանց Աղուանից երկիր և դրացիք, Արցախ. - Երևան, 1999. - էջ 54: Նիկողայոս Աղոնց Հայաստանը Հուսփինիանոսի դարաշրջանում. - Երևան, 1987. - էջ 11 – 79, 451 - 455: Մանանյան Հ. Քննական գիտություն հայ ժողովրդի պատմության, հայոր Բ. - Երևան, 1960. - էջ 75 – 76:

⁵ Մանանյան Հ. նշվ. աշխ. - էջ 9 – 10: Ուլուբարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 108 – 122, 130, 135:

⁶ Մովսես Կաղանկարվացի Պափմություն Աղվանից աշխարհի /թարգման. գրաք. Վ.Առաքելյանի/. - Երևան, 1969 թ. - էջ 11-12: Ուլուբարյան Բ.Ա. նշվ.աշխ. - 129-131, 150-151: Բալայան Վ. Արցախի պատմություն. - Երևան, 2002. - էջ 67-81:

⁷ Մանանյան Հ. նշվ. աշխ. - էջ 10-11, 50-52: Ուլուբարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 129-154:

¹ Կարագեողեան Յ. Սեպազիր գեղանուններ Այրարափում և հարակից նահանգներում. - Երևան, 1998 թ. - էջ 40 – 41, 85: Պոտրովսկի Բ. Վանսկое царство. - М. 1954. - С. 92 - 93. Ուլուբարյան Բ.Ա. Դրվագներ Հայոց Արևելյաց կողմանց պատմության (V-VII դ.դ.). - Երևան, 1981. - էջ 5:

² Սպեհիանոս Օրբելյան Սյունիքի պարմություն /թարգմ. գրաք. Ա. Աբրահամյանի/. - Երևան, 1986. - էջ 72-73: Մակար Բարխուդարեանց Աղուանից երկիր և դրացիք, Արցախ. - Երևան, 1999. - էջ 53: Ուլուբարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 5 – 7:

³ Փավստոս Բուզանդ Հայոց պատմություն /թարգմ. գրաք. Արք. Մալխասյանցի/. - Երևան, 1987. - էջ 319-322:

պայմաններում Վաչագան Բարեպաշտի թագավորությունը հայահավաք կենդրոնի դեր էր կարարում⁸:

Ուսուցչան հիմքերն ամրապնդելու և երկրի հոգևոր կյանքի վերելք ապահովելու համար Վաչագան թագավորը ձեռնամուխ է լինում Եկեղեցաշխնության ու հայ դպրության գործին: Նրա կառավարման դարիներին երկիրը դնդեսական վերընթաց է ապրում: Դոգլոր-Եկեղեցական, աշխարհիկ՝ հասարակական, սոցիալ-դնդեսական կյանքը կանոնակարգելու նպատակով Վաչագան թագավորը Աղվեն ամառանոցում (ներկայիս՝ Մարգակերտի շրջան) 488թ. գումարում է հայ հոգևոր և աշխարհիկ գերերի մի ժողով, որին քննարկվում և ընդունվում է նորասդեղ թագավորության «Կանոնական Սահմանադրություն»-ը⁹:

Հայրնի է, որ մինչև Վաչագան Բարեպաշտի «Կանոնական Սահմանադրության» ընդունումը՝ 356 թվականին Աշխարհապում (Նարավային Հայաստան, Վան քաղաքի մոտ գտնվող քաղաք) գումարված առաջին Եկեղեցական ժողովում և 444 թվականին Շահապիվանում (Վրարափ լեռն մոտ գտնվող բնակավայր)՝ երկրորդ Եկեղեցական ժողովում ընդունվել էին Եկեղեցական և աշխարհիկ կյանքը կարգավորող Կանոններ¹⁰: Սակայն բուն մայր երկրում հայկական պետրականության բացակայության պայմաններում ընդունելով «Կանոնական Սահմանադրությունը», ընդգծեց նոր քաղաքական իրողությունը. հայոց երկրի մի անկյունում անկախ հայկական թագավորության գոյությունը, ինչն ունի խորհրդանշական արժեք արցախահայության պետրականության զարգացման դեսանկյունից:

«Կանոնական Սահմանադրություն»-ը արցախահայության հոգևոր-Եկեղեցական, աշխարհիկ՝ հասարակական հարաբերությունների ուսումնասիրման համար ունի թագավորությունում Եկեղեցու մեծ դերի մասին: Այն վկայում է թագավորությունում Եկեղեցու մեծ դերի մասին: Ըստ Աղվենի կանոնների, սահմանվում էին հարկերի ծավալները և գործադրությունը՝ հարկերը պարփառիր էին հասարակության բոլոր խավերի համար՝ շինականներից մինչև ազնվական խավերի ներկայացուցիչների, նույնիսկ արքայական դուռը սերվածների համար: Տարակ պարփառներ էին սահմանվում գրապարփումների, օրինախախտումների և մարդասպանությունների, հասարակական կարգ ու կանոնի խախտման համար, ընդունում՝ ժողովրդի իմացությամբ: Առանձին կանոններ նպագագառուղիված էին հասարակության բարոյական կերպարն անխաթար պահելուն: «Կանոնական Սահմանադրություն»-ը թագավորին էր վերապահում օրենքների սահմանումը, և երկրի ներսում բոլոր հոգևորականներն ու աշխարհականները՝ ազնվականներն ու շինականները պարփափոր էին խոնարհարար Ենթարկվել արքունիքի որոշումներին: Աղվենի կանոնները պարփառիր էին հասարակության բոլոր խավերի համար՝ վկայելով հասարակության լիարժեք կենսագործունեության, օրենքի գործի ու ոգու գերակայության մասին¹¹:

Վաչագան Բարեպաշտի գահակալությունը մի ամբողջ դարակազմիկ շրջան է հանդիսացել Հայաստանի քաղաքական, դնդեսական և մշակութային կյանքում: Նրա մահից հետո VI դարի գրեթե ողջ երեք քառորդը Արցախն ապրում էր խաղաղ ու բարեկեցիկ կյանքով¹²:

Արցախահայության պետրականության պահպանման և պարսից հակահայ քաղաքականությանը դիմակայելու նպագակով 552թ. (հայոց թվականության առաջին դար) հիմնադրվում է կաթողիկոսական աթոռը: Կաթողիկոսանիսպ կենդրոն է դառնում Պարփավը (ներկայիս Բարդա): Նորասպեղծ

⁸ Սովետ Կաղանկարգացի Պարմություն Աղվանից աշխարհի. - Երևան, 1969 թ. - էջ 8 – 30: Նիկողայոս Աղոնց նշվ. աշխ. - էջ 240-260, 272, 303-305, 432-433: Ուլուրաբյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 5, 123-124, 130-140, 150-164:

⁹ Սովետ Կաղանկարգացի նշվ. աշխ. - էջ 31 – 65: Ուլուրաբյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 157-194:

¹⁰ Ավագյան Բ. Պատմական առաջնային գործառնությունները. - Երևան, 2000. - C. 11, 25-29.

¹¹ Սովետ Կաղանկարգացի նշվ. աշխ. - էջ 65 – 70:

¹² Մանանդյան Դ. նշվ. աշխ. - էջ 252-256: Ուլուրաբյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 194-197:

Կաթողիկոսությունն ուներ մեծ հեղինակություն: Նրա զահերեցությունը գարածվեց մինչև Դերբենդի դռները: Այն կոչվում էր «Կաթողիկոսություն Աղվանքի, Լինեաց և Չողա»: VII. Երկրորդ կեսին Սյունիքի եպիսկոպոս Պետրոսն իր թեմը միացնում է կաթողիկոսությանը: Կաթողիկոսությունն իր գործունեությունն իրականացնում էր Մայր Աթոռի՝ Ամենայն հայոց կաթողիկոսության հովանու ներքո՝ ընդունելով վերջինիս գերազահությունը¹³:

Արաբական արշավանքների հետևանքով սփեղծվում է նոր քաղաքական իրավիճակ, որի պայմաններում Համազասպ Մամիկոնյանի զիսավորությամբ մի կարճ ժամանակադարձ (654-661թ.թ.) միավորվում են Հայաստանի բյուզանդակաղաքական և պարսկակաղաքական հարվածները: Արցախը միացնում է միացյալ հայկական պետքությանը¹⁴:

VII դարը արցախահայությանը բերում է նոր արհավիրքներ: Օգովելով պարսկա-բյուզանդական հակամարդությունից՝ Կովկասյան լեռնաշղթայից հյուսիսի բնակվող բազմաթիվ խառնամբույս ցեղեր, մասնավորապես՝ խազարները (հոները) ճորա պահակով (Դերբենդ) և Վլանաց դրներով (ներկայիս Վրաստանի հյուսիս-արևելյան հարված) մուլք են գործում Հարավային Կովկաս՝ ամեն դեղ սփռելով մահ ու ավերածություններ¹⁵:

¹³ Սովոր Կաղանկարվացի Պատմություն Աղվանից աշխարհի. - Երևան, 1969 թ. - էջ 212, 268: Նիկողայոս Աղոնց նշվ. աշխ. - էջ 377-378: Սովորանոս Օրբելյան Սյունիքի պարմություն /թարգմ. Ա.Վրահամյանի/. - Երևան, 1986. - էջ 73-80, 98, 119-121, 125: Ուլուբարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 203-205:

¹⁴ Պարմութիւն Սերեոսի /աշխարհակրությամբ Գ.Արքարյանի/. - Երևան, 1979. - էջ 67 - 69, 174 - 175, 366: Մանանյան Ռ. նշվ. աշխ. - էջ 18-32, 53-55, 150-152, 174-200: Քալայան Վ. նշվ. աշխ. - էջ 89: Սարգսյան Ս. Արցախ. պարմա-աշխարհագրական ճշգրտումներ. - Երևան, 1996 թ. - էջ 32:

¹⁵ Սովոր Կաղանկարվացի նշվ. աշխ. - Երևան, 1969 թ. - էջ 116 - 129, 145: Մակար Բարիսուրարեանց նշվ. աշխ. - էջ 55: Ուլուբարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 206-218: Սարգսյան Ս. Խաչենի ամրոցները. - Սովորանակերպ, 2002 թ. - էջ 96:

Միևնույն ժամանակ ուժգնանում են նաև արաբական արշավանքները Հայաստանի վրա: Արաբները մեծ թափով արշավում են Արցախ երկրամաս, որպես Զիվանշիր¹⁶ թագավորը, որն ընդունել էր Համազասպ Մամիկոնյանի գերազույն իշխանությունը, զենքի ուժով ու դիվանագիրությամբ միառժամանակ կարողանում է դիմակայել նրանց ճնշումներին: Զիվանշիրը մեկնում է Դամասկոս՝ Ասորիքի և Վերին Միջագետքի (ներկայիս Սիրիա և Իրաք) արար կառավարիչ Մուավիայի մով, որը նրան ընդունում է արքայավայել: Մուավիան Կուր գետից մինչև ճորա պահակ (Կուր գետից մինչև Դերբենդ) ընկած գարածքների կառավարումը հանձնում է Զիվանշիրին՝ անվանակոչելով նրան «Արևելքի իշխան»: Դամասկոսից վերադարձի ճանապարհին Զիվանշիրը Արուճ ավանում (ներկայիս Աշխարհական շրջան) հանդիպում է Հայոց Մեծ իշխան Գրիգոր Մամիկոնյանին և Անաստաս կաթողիկոսին՝ պայմանավորվելով հերազար անելիքների համար քեղու ծրագրի մասին¹⁷:

IX դարում ակրիվանում են հակաարաբական շարժումները: Արցախում հակաարաբական շարժումը զիսավորում էին Սահլ (Սահակ) Մմբարյանը (Արցախ-Խաչենի իշխան) և Եսային (հարավային Արցախի իշխան)¹⁸:

Դայ ժողովրդի հակաարաբական ընդվզումներն ի վերջո հանգեցնում են Հայաստանի անկախության վերականգնմանը: 885թ. արաբական խալիֆայությունը ճանաչում է Աշուպ Ա Բագրատունուն Մեծ Հայքի նահանգների գերազույն փիրակալ: Հայոց թագավորության մայրաքաղաքն է դառնում Անին: Արցախը նորից է հայդնվում իր օրրանում՝ համահայկական

¹⁶ Սովոր Կաղանկարվացի նշվ.աշխ. - էջ 134-148:

¹⁷ Պարմութիւն Սերեոսի նշվ. աշխ. - էջ 174 - 176: Սովոր Կաղանկարվացի նշվ. աշխ. - էջ 149-158: Մանանյան Ռ. նշվ. աշխ. - էջ 198-199, 227: Ուլուբարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 219-263: Քալայան Վ. նշվ. աշխ. - էջ 90-95:

¹⁸ Թովմա Արծրունու և Անանուն Պատմություն Արծրունյաց գրան /թարգման. գրաք. Վ.Վարդանյանի/. - Երևան, 1985. - էջ 296-299: Մակար Կաղանկարվացի նշվ. աշխ. - էջ 255: Ուլուբարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 277: Քալայան Վ. նշվ. աշխ. - էջ -- 96-101:

պետության ուղեծրում: Նայոց պետությունը Բագրադունիների ժամանակաշրջանում կոնֆեռերապիվ բնույթ էր կրում՝ իր կազմում ունենալով մի շարք թագավորություններ, իշխանություններ: Դրանցից էին Խաչենի (կենտրոնական Արցախ) և Դիզակի (հարավային Արցախ) իշխանությունները, Փառիսոսի թագավորությունը (հյուսիսային Արցախ), որոնք ունեին սերպ փոխհարաբերություններ և համարցախյան հարցերը լուծում էին միասնական շանքերով¹⁹:

Սակայն արցախյան իշխանությունների խաղաղ ու բարգավաճ կյանքը խաթարվում է սելջուկ-թուրքերի հարձակումների հետևանքով: XII. երկրորդ կեսին սելջուկները սրի ու գերության են մատնում Արցախն ու Ուլիքը, այնուհետով՝ ողջ Աղվանքը: Սելջուկ առաջնորդ Ալի-Ասլանի կառավարման դարիներին (1036-1072թթ.) նվաճվում է ամրող Տայասպանը: 1064թ. սելջուկ-թուրքերը ավիրում են Անին: Վյուհանոերձ, սելջուկներին չի հաջողվում վերջնականացնելու հրեց ենթարկել Արցախ-Խաչենի իշխանությունը, որը դպյակ ժամանակաշրջանում բաժանված էր երեք ճյուղերի՝ Խոխանաբերդ, Դարերը և Դանդարերդ ամրոցներով (ներկայիս Խաչեն գետից մինչև Թարթառ՝ Մարգարակերպի և Ջարվաճառի շրջաններ):²⁰

Այսպիսին էր իրավիճակը, երբ Զաքարյանները, հայվրացական գործերի գլուխ անցած, սկսեցին ազադագրել Տայասպանի հյուսիսարևելյան նահանգները.

XII դարի կեսերից սելջուկ-թուրքական լայնածավալ կայսրությունը քայլայվում է, իր հզորությամբ ասպարեզ է իշխում Վրացական թագավորությունը, որին իշխում էր հայ Բագրադունիների փոհմի մի ճյուղը: Տայերին անհրաժեշտ էր

Վրասրանի օգնությամբ թոքափել սելջուկյան լուծը, իսկ վրացիներին՝ ունենալ հավագարիմ դաշնակից Անդրկովկասում քաղաքական գերիշխանության հասնելու համար:

Տայ-վրացական ռազմա-քաղաքական համագործակցության շերմացման գործում մեծ դերակարգարություն ունեին վրաց արքունիքում ծառայող հայ իշխանները, մասնավորապես՝ Զաքարյանների փոհմի ներկայացուցիչները:

Տայասպանի ազադագրման գործը XII. 80-90-ական թվականներին նոր թափ է սպանում, և նրանում վճռական դեր են կարգարում Զաքարյանների իշխանական փոհմից՝ հայ-վրացական զորքերի հրամանագրար (ամիրսպասալար) Զաքարեն և Խվանեն: Արևելյան Տայասպանում հայ-վրացական միացյալ ուժերը ազադագրում են Գարդմանը, Տավուշը, Գազը, Շամքորը, Վերին Խաչենը և այլ շրջաններ (ներկայիս՝ Քարվաճառի, Խանլարի Դաշքեսանի, Գերաբեկի, Շամքորի, Թոռուզի, Ղազախի, Շամշադինի, Նոյեմբերյանի և Իջևանի շրջանները):²¹

Տայ-վրացական միացյալ ուժերի հաջող գործողությունները ովկորում են Միջին և Ներքին Խաչենի (ներկայիս Կարկառ, Խաչեն և Թարթառ գետերի հովիտներ) իշխաններին, որոնք ել սելջուկան ուժերով ազադագրում են իրեց երկրամասը:²²

Վիրաբեկվող ժամանակաշրջանում Արցախում գոյություն ունեցող իշխանություններից իրեց հզորությամբ գործում էին երեք՝ Վերին Խաչենը կամ Ծարա իշխանությունը, Միջին Խաչենը կամ Դարերը իշխանությունը և Ներքին Խաչենը:

Վերին Խաչենը կամ Ծարա իշխանությունը, որին իշխում էր Դոփյանների փոհմը, ընդունում էր Զաքարյանների գերազահությունը: Միջին Խաչենի կամ Դարերը իշխանությունը, որի գահական էր արցախյան իշխանական (առան-

¹⁹ Խալաթյանց Բ. Արաբացի մատենագրերը Տայասպանի մասին. – Վիեննա, 1912 թ. - էջ 23 – 25: Թովմա Վրծրունի նշվ. աշխ. - էջ 276-280, 313-323, 324-331, 348-356, 366-367: Մանանյան Ռ. նշվ. աշխ. - էջ 35-36, 39-40, 63-73, 209-234, 301-302, 313: Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 105-113:

²⁰ Մարգարետ Ուոթհայեցի Ժամանակագրություն. – Երևան, 1991. - էջ 146: Մանանյան Ռ. նշվ. աշխ. - էջ 70-73, 307, 319: Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 114-117: Ավագին Պ. յկազ. սոչ. - Ը. 13.

²¹ Վիրաբեկ Գանձակեցի Պատմություն Տայոց. – Երևան, 1961 թ. - էջ 162 – 163: Սպեկիանոս Օրբելյան Սյունիքի պատմություն /թարգման. գրաք. Ա. Վրբահամյանի/. - Երևան, 1986. – 294, 295, 316:

²² Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 119-120:

շահիկ)²³ պոհմից Հասան «իշխանաց իշխանը» իշխում էր Հաթերքի, Հանդաբերդի, Խաչենաբերդի և Հավքախաղացի պարածքներում (ներկայիս Խաչենագետից մինչև Թարթառի հովիք՝ ներառյալ Հանդաբերդի, Դադիվանքի շրջակայքը): Ներքին Խաչենում (ներկայիս Կարկառ և Խաչեն գետերի միջնամաս) իշխում էր արցախյան իշխանական (առանշահիկ) պոհմից Հասան Զալալ-Դոլա իշխանը, որի կառավարման շրջանում երկրամասը գնդեսական և մշակութային վերելք ապրեց: Նա իրեն համարում էր «թագավոր բարձր և մեծ Արցախական աշխարհի»²⁴, մի կարգավիճակ, որն ընդունում էին նույնիսկ վրաց թագավորները²⁵: XII – XIII դ.դ. հանդիսացան Արցախի իշխանությունների վերելքի ժամանակաշրջան:

Սակայն Արցախին վիճակված չէր երկարափև խաղաղություն: Ասպարեզ են իշնում մոնղոլ-թաթարները, որոնք, ի թիվս այլ վարածքների (Աքրապաղականի, Վրաստանի և այլն), գրավում են նաև Դայասպանը՝ այդ թվում Արցախ երկրամասը՝ կազմելով մեկ փոխարքայություն²⁶:

XIV դարի 80-ական թվականներին Անդրկովկաս են ներխուժում Լենկ թեմուրի զորամիավորումները: 1386թ. գարնանը, գրավելով Թավրիզը և անցնելով Արաքս գետը, Լենկ թեմուրի հորդաները դիրում են Արևելյան Դայասպանի մի շարք շրջանների, ներխուժում Արցախ, գրավում Վերին Խաչենը: Արշավանքները կրկնվում են դարի 90-ական թվականներին²⁷:

XVդ. սկզբներին Արցախ են ներխուժում կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերը, 80-ական թվականներին՝ Ռուս Դոդիսամիշի զորքերը:

Զնայած վերոհիշյալ բոլոր հարձակումներին, Արցախի լեռնային մասերում իշխանական վճերը կարողանում են դիմակայել ճնշումներին՝ պահպանելով դարեր շարունակ երկրամասում գոյություն ունեցած պետական ինսպիրուվուների կենսունակ բեկորները²⁸:

XVI դարի սկզբներից մինչև XVII դարի 30-ական թվականների վերջը Հայասպանը ուազմական թափերաբեմ էր դարձել Առաջավոր Ասիայում քաղաքական գերիշխանության ձգող Սեֆյան Իրանի և Օսմանյան թուրքիայի միջև: Դեռևս 1502թ. շահ Խամայիլը, պարզության մաքնելով ակ-կոյունլուներին և գրավելով մայրաքաղաք Թավրիզը, իհմք է դնում Սեֆյան պետական կրոն հայքարարելով շիհզմը՝ նա պայքար է սկսում սուննիզմի հետքւորդների դեմ: Սուննիզմը հովանավորող թուրքիան, ընդունելով այս մարդարակերը, ուազմական թափերաբեմ է դարձնում երկու գերությունների միջև գիճնկող հայոց երկիրը, ներառյալ՝ Արցախ երկրամասը: Հայոց հողի վրա թուրք-պարսկական բախումները շարունակվում են մինչև 1640թ.: Կոստանդնապոլսում կնքվում է հաշվության պայմանագիր, որի համաձայն Արևելյան Դայասպանը, ներառյալ՝ Սյունիքն ու Արցախը, անցնում են Պարսկասպանին: Վյուհանդերձ Արցախի մելիքներն ունենին ներքին ինքնավարության կարգավիճակ և, ապավիճած լեռնային անմարչելի բարձունքներին, շարունակում էին պահպանել հայկական պետականության բեկորները²⁹:

XVIII դարի սկզբներին և հաջորդ գալուստյան մելիքները հանդես էին գալիս որպես ազգային-ազարագրական շարժման առաջամարդիկներ: Տվյալ ժամանակաշրջանում պարսից պետականությունը խարխլվում էր ներքին երկպառակություններից ու աֆղանների հետ ճգճգվող պարերազմ-

²³ Ուղուարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 129-198:

²⁴ Գանձասարի վանքի շինարարական արձանագրություն (XIII դար):

²⁵ Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 120-124:

²⁶ Կիրակոս Գանձակեցի նշվ. աշխ. - էջ 234-369, 312-358, 388-392:

²⁷ Առաքել Դավիթեցի Պատմություն /թարգման. Վ.Առաքելյանի/. - Երևան, 1988. - էջ 490-491: Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 137-138:

²⁸ Ուղուարյան Բ.Ա. նշվ. աշխ. - էջ 265: Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 139-142:

²⁹ Առաքել Դավիթեցի նշվ. աշխ. - էջ 24-72, 83-141, 213-224, 443-446, 472-483, 490-504: Հայ ժողովրդի պատմություն /8 հավորով/ հավոր IV. - Երևան, 1972 թ. - էջ 81-116: Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 143-150:

ներից, և նպաստավոր պայմաններ էին սպեղծվել մելիքությունների իրավաբարաքական կարգավիճակի փոփոխման համար: Օգդելով հարմար առիթից, սկսում է ակրիվանալ նաև Պարսկաստանի դարավոր թշնամի թուրքիան, որը, հրահրելով Դաղստանի ավարառու լեռնականներին, ավերիչ արշավանքների է մղում նրանց պարսկական փիրապեփության տակ գրնառ գրարձների վրա: 1722թ. գարնանը Դաղստանի լեռնականների մի սրբար խումբ, անցնելով ճորա պահակը (Դերբենդ), ավերում է Շամախի քաղաքը, որդեռից արշավանք է ձեռնարկում դեպի Արցախ, բայց ջահաջախում և նահանջում է ելման դիրքերը՝ Կուրի ձախ ափը: Թշնամու դեմ միավորվում են Արցախ լեռնաստանի մելիքները³⁰: Հյուսիսային լեռնականների դեմ ինքնապաշտպանությունը գրաբերայնորեն վեր է ածկում պարսկական իշխանության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի՝ վերակերպելով արցախահայության պետականությունը³¹:

³⁰ Եթ Երկերի ժողովածու, հագոր 3, գիրք 2. - Երևան, 1973 թ. - էջ 118 - 122: Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 152-153:

³¹ Եսայի կաթողիկոս Դասան Զալալյան Պատմութիւն կամ յիշաբակ ինչինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից. - Շուշի, 1839 թ. - էջ 57-58: Թերունց Մ. Նայ իրավաբարաքական, պետական միքրը Հայաստանի ազատագրման ծրագրերում /Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարը 1722-1730 թ.թ. և հայկական պետականության վերականգնման շանքերը/. - Երևան, 2003. - էջ 13:

Այս ժամանակաշրջանում համարցախյան խնդիրները քննարկվում և լուծվում էին Հայկական ժողովում, որը հանդիսանում էր Արցախի ռազմա-քաղաքական միասնական իշխանության խորհրդանշը: Ժողովները գումարվում էին պաշտպանական հուսալի կենդրուներում՝ սխնախներում, որպես հավաքվում էր ռազմա-քաղաքական և հոգևորական վերնախավը: Այն, որ այդ ժողովները դիպարկվում էին որպես արցախահայության ներկայացնեցական մաշմին վկայում են բազմաթիվ նյութեր (պես՝ Էզօք Գ. Չոշենիա Պետրա Վելիկու արօնություն 1898 թ. - Ս. 367, 386-388. Արքահամյան Ա. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուստական հարաբերությունների պայմանագրունից. - Երևան, 1953 թ. - էջ 82 - 83, 125 - 130: Սարգսյան Ա. Խաչենի ամրոցները. - Սպետիանակերպ, 2002 թ. - էջ 102: Թերունց Մ. նշվ. աշխ. - էջ 12-15):

Այդ ամենը դեղի էր ունենում Պետրոս I-ի հայդնի Կասպիական արշավանքին համընթաց, որով նախկինում սկզբնավորված և հետագայում ամրապնդված որպես հայ-վրաց-ուստական ռազմաքաղաքական համագործակցության արդյունք ձևավորած դաշինքը դիվանագիտական ոլորտից անցնում է կոնկրետ գործողությունների՝ նպաստակ ունենալով Հարավային Կովկասն ազագել Պարսկաստանի և Թուրքիայի փիրապեփությունից և Ռուսաստանի հովանավորության տակ սրբեղծել հայ-վրացական միացյալ պետություն: Սակայն դեպքերը զարգանում են ի վնաս հայ-վրացական զինակցության, հայերը միայնակ են մնում պարսկեների, թուրքերի և լեզգիների դեմ³²:

1723թ. արցախսահայության համար սկսվում է փորձության նոր շրջան: Թուրքական իշխանությունները ամեն կերպ ձգվում էին հասնել Կասպից ծովի ափերին: Հայկական գորախմբերի կողմից թուրքական բանակին դիմադրությունն իր զագաթնակերպին է հասնում 1727-1728թ.թ.³³: 1729-1731 թ. թ. դիմադրական շարժման գլխավոր օջախը Գյուլիստանի բերդն էր³⁴ (ներկայիս՝ աղբեջանական գործերի կողմից օկուպացված Շահումյանի շրջան):

Անիրաժեշտ է նշել, որ արցախսահայության պայքարին զուգահեռ ընթանում էր թուրք նվաճողների դեմ ուղքի ելած իրանական ժողովուրդների պայմանագրունից. - Երևան, 1953 թ. - էջ 82 - 83, 125 - 130: Սարգսյան Ա. Խաչենի ամրոցները. - Սպետիանակերպ, 2002 թ. - էջ 102: Թերունց Մ. նշվ. աշխ. - էջ 12-15:

³² Էզօք Գ. Չոշենիա Պետրա Վելիկու արօնություն. - ՍՊ/6/, 1898 թ. - Ս. 428 - 430, 439 - 441. Արքահամյան Ա. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուստական հարաբերությունների պայմանագրունից. - Երևան, 1953 թ. - էջ 82 - 83, 125 - 130: Սարգսյան Ա. Խաչենի ամրոցները. - Սպետիանակերպ, 2002 թ. - էջ 102: Թերունց Մ. նշվ. աշխ. - էջ 12-15:

³³ Արմաно-ռուսական պայմանագրությունը հարաբերություն 1729 թ. - Երևան, 1978 թ. - Ս. 19-20, 23-27.

Հայ ժողովուրդի պայմանագրությունը /հարաբերություն 1730 թ. - Երևան, 1972. - էջ 158-166: Սարգսյան Ա. նշվ. աշխ. - էջ 102: Թերունց Մ. նշվ. աշխ. - էջ 15-17:

³⁴ Մաֆֆի Երկերի ժողովածու, հագոր 10. - Երևան, 1964 թ. - էջ 164 - 170: Արմաно-ռուսական պայմանագրությունը. - Սպետիանակերպ, 2002 թ. - էջ 9-10, 155 :

Պարսկասպանի նոր փիրակալ Նադիր շահը: Պարսկասպանում կապարվող իշխանափոխությանը զուգահեռ Արցախում ձևավորվում են վարչաքաղաքական նոր միավորումներ՝ Խամսայի մելիքությունները (Գյուլիսարանի, Զրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքություններ), որոնք մովակա դասնամյակներում դառնում են հայ ազգային-ազագա գրական պայքարի նոր հանգրվաններ և հայ ազգային պետականության կրողներ: 1736 թ. Նադիր շահը ճանաչում է Խամսայի մելիքությունների ինքնավարությունը՝ նրանց ազագելով գեղական խաների կառավարումից և ինքնուրույնություն գոալով ներքին հարցերում³⁵: Ունենալով որոշակի ինքնուրույնություն, այնուամենայնիվ, մելիքությունների կարգավիճակը շաբ բանով կախված էր Պարսկասպանում գեղի ունեցող քաղաքական անցուղարձից: Նադիր շահի մահից հետո (1747թ.) Պարսկասպանում փլուզվում է կենքրոնաձիգ իշխանության համակարգը. խանություններն իրենց անկախ են հոչակում: Հաշվի չառնելով արցախահայության կամքը՝ խանություն է ձևավորվում նաև Արցախ-Ղարաբաղում՝ Փանահ խանի գլխավորությամբ³⁶: 1763 թ. Փանահ խանին փոխարինում է Իբրահիմ խանը: Այդ ամենը գեղի էր ունենում արցախահայության ըմբուգության պայմաններում, որը չէր հանդուրժում օպարի լուծը: Դժվարին այս ժամանակաշրջանում Արցախ-Ղարաբաղ է գալիս հայ ազգային-ազագա գրական շարժման ականավոր գործիչ Ռուսենի Էմինը³⁷, որը մեծ հոլույթ էր կապում Արցախի մելիքների հետ՝ նրանց մեջ գեսնելով ապագա միացյալ հայկական պետականության վերականգնման հիմնաքարը: Հյուրընկալվելով Գյուլիսարանի մելիք Ռուսենի մոտ, նա փորձում էր միավորել մելիքների

³⁵ Մակար Քարիստարեանց նշվ. աշխ. - էջ 199: Դայ ժողովրդի պարմություն, հագոր 4. - Երևան, 1972. - էջ 180-186: Բաֆֆի Երկերի ժողովածու, հագոր 10. - Երևան, 1964. - էջ 162-164: Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 165-168:

³⁶ Բալայան Վ. նշվ. աշխ. - էջ 171-177:

³⁷ Иоаннисян А.Р. Иосиф Эмин. - Ереван, 1989. - 292 с.

Թեղունց Մ.Մ. Հայ ազգային-ազարագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միվրբը. - Երևան, 1995. - էջ 9-64:

ուժերը, կազմել միասնական բանակ: Հովսեփի Էմինը ոգևորում է մելիքներին ու Գանձասարի կաթողիկոսին, որոնց ռուսամեք քաղաքականությունը մրահոգում էր Իրրահիմ խանին, որը մի շարք դաժանություններ գործեց՝ ձգվելով կասեցնել մելիքների և Ռուսապանի միջև ամրապնդվող կապերը: Սակայն այդ ամենը չխանգարեց, որ աշխուժանա Ռուսասրանի հետ կապող դիվանագիտական ճանապարհը³⁸:

XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին սկսվում է արցախահայության ազադագրական պայքարի և Ռուսաստանին միացման եզրափակիչ փուլը: 1805թ. մայիսի 14-ին Քյուրակչայի պայմանագրով Արցախ-Ղարաբաղը ընդունում է Ռուսաստանի հռվանավորությունը³⁹: Սակայն Պարսկաստանը չի հաշվում նման իրողության հետ⁴⁰, և սկսվում են ռուս-պարսկական պատերազմները, որոնց արդյունքում 1813թ. հռկդեմքերի 12-ին կնքվում է Գյուլիսափանի հաշվության պայմանագիրը: Ի թիվս այլ գարածքների, Արցախ-Ղարաբաղը, որը գարածվում էր Արաքս գետից Կուրի աջափնյակով մինչև Վրաստանի սահմանները, անցնում է Ռուսաստանի տիրապետության դրական⁴¹: Ոչ շաբ անց Պարսկաստանը Անգլիայի և Ֆրանսիայի դրդմամք կրկին փորձում է տիրանալ այդ գարածքներին: Ակավում է ռուս-պարսկական նոր պատերազմ, որն ավարտվում է ռուսների հաղթանակով: 1828թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում կնքվում է հաշվության պայմանագիր: Վրևելյան Հայաստանը պահպանում է իր անկախությունը և անկախությունը պահպանում է իր անկախությունը:

³⁸ Արքահամ Կրեպացի Պատրիարքութիւն անցիցն իվոց և Նապոր շահին պարսից. - Էջմիածին, 1870. - էջ 13: Ախմեդ-բեկ Ջևանշիր Օ политическомъ существовании карабагского ханства с 1747 по 1805 годъ — Шуша, 1901 г. — С. 20-66. Потто В. Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества. — Тифлис, 1902. — С. 4-11.

Բաֆֆի Երկերի ժողովածու, հագործ 10. - Երևան 1964 թ. - էջ 185 - 214:
Բալյայան Վ. նշվ. աշխ. - էջ 185-193:

³⁹ Ахмед-бек Дживаншир указ. соч. — С. 67-75

⁴⁰ Потто В. указ. соч. - С. 12-36

⁴¹ Советско-иранские отношения в дипломатических
отношениях. - М., 1946 г. - С. 24 - 26.

գրանք, այդ թվում Արցախ-Ղարաբաղը, մինում են Ռուսական կայսրության կազմի մեջ որպես առանձին հայկական վարչամիավոր, որը հետքագյում վերածվում է Անդրկովկասում Ռուսական կայսրության վարչադրանշային միավորների կազման գործընթացի արդյունքում⁴²: Այդ գործընթացն իր վերջնական դեսքն է սպանում 1867թ. դեկտեմբերի 9-ի Կանոնակարգի համաձայն, երբ Անդրկովկասը բաժանվում է 5 նահանգների՝ Քույթայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի նահանգների: Արևելյան Հայաստանի քարածքների մի զգալի մասը միջնորդում է Երևանի, իսկ մյուս մասը՝ Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգների մեջ: Արցախ-Ղարաբաղը հայքին վում է Ելիզավետպոլի նահանգի մեջ, որի կենտրոն է ճանաչվում Ելիզավետպոլը (Գանձակը): Վարչադրանշային այս բաժանումը մնաց անփոփոխ մինչև 1917թ.⁴³:

1917 թվականի վերջին քայլայվեց Ռուսական կայսրությունը: 1918 թվականին, երբ Անդրկովկասը դուրս մնաց Ռուսաստանի պետքա-իրավական վարածքից և այդ քարածքաշանում կազմավորվեցին երեք անկախ պետքա-իրավունքներ՝ Հայաստանի Հանրապետությունը, Աղրբեջանական Հանրապետությունը և Վրաստանի Հանրապետությունը, ամբողջ սրբությամբ առաջացավ քարածքային վեճ⁴⁴:

Աղրբեջանը ձևավորվեց նկրվումներով հայկական պարմական հողերի հանդեպ, այդ թվում Արցախ-Ղարա-

⁴² Тунян В.Г. Россия и армянский вопрос. – Ереван, 1998. – 3-29, 45.

⁴³ Шахатунян А. Административный передел закавказского края. - Тифлис, 1918 г. - С. 65 - 70.

Нагорный Карабах в 1918-1923 г.г. Сборник документов и материалов /отв. ред. В.А.Микаелян/. – Ереван, 1992. – С. XII – XIII.

⁴⁴ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. XIII.

Хуршудян Л. Истина - единственный критерий исторической науки. - Ереван, 1989. - С. 8-9. Барсегов Ю. "О двойных стандартах" в подходе к современным конфликтам (Как Азербайджан привлекает Россию на свою сторону в решении карабахской проблемы). – Рязань, 1997. – С. 19-54.

բաղի՝ հայքարարելով վերջինս իր գործածքի մաս: Արցախայությունը, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը կորված է Արցախ-Ղարաբաղից և գտնվում է ծանր վիճակում, որիմագրավելով թուրքական հարձակումներին, ի վիճակի չէ գործուն օգնություն ցուցաբերել իրեն թուրքական իշխանությունների կողմից սափարվող Աղրբեջանական Հանրապետության նկրվումների դեմ պայքարում⁴⁵, որոշեց ինքնուրույն կազմակերպել և իրականացնել իր պայքարը՝ քաղաքական զարգացման հայկական ուղղվածության ուղեծրում: 1918թ. հունիսի 22-ին Ղարաբաղի Ժողովրդական ներկայացուցիչների 1-ին համագումարը Ղարաբաղը հոչակեց ինքնուրույն քաղաքական-վարչական միավոր, կազմավորեց Ղարաբաղի Հայկական Ազգային Խորհուրդը և Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը⁴⁶: Ըստ եւլույան, նախաձեռնվեց Արցախ-Ղարաբաղի անկախ պետքանության հիմնադրումը: Սպեհոծվեց ազգային բանակ՝ հաղթահարելով Աղրբեջանի բոլոր նկրվումները:

Աղրբեջանական Հանրապետությունը, ձգվելով ենթարկել Արցախ-Ղարաբաղն իր իշխանությանը, ամեն կերպ փորձում էր ճնշել հայ ժողովրդի ոգին և ինքնությունը: Սակայն դա նրան այդպես էլ չհաջողվեց:

Արցախահայությունը չեր ընդունում Աղրբեջանական Հանրապետության իշխանությունը: Ռազմական գործողություններն անարդյունավետ էին, դարաբաղյան գորախմբերը հումկու դիմադրություն էին ցույց քալիս: Ղարաբաղում իրական իշխանությունը Ղարաբաղի Հայկական Ազգային Խորհրդի և Ղարաբաղի ժողովրդական կառավարության ձեռքում էր⁴⁷:

⁴⁵ Հարությունյան Ա.Ն. Թուրքական ինքնուրության Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կրիվները. – Երևան, 1984. - Էջ 65-331: Բալյան Վ. նշվ. աշխ. - Էջ 275-277, 296-300:

⁴⁶ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. XVI - XVII, 13-15. Хуршудян Л. указ. соч. - С. 9-10.

⁴⁷ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. 18, 19, 23, 26-28, 427-432, 447-448, 452-456. Хуршудян Л. указ. соч. - С. 8-12.

Հարկանշական են Ղարաբաղի ժողովրդական ներկայացուցիչների համագումարների հետվայալ որոշումները. 1918թ. սեպտեմբերի 6-ին 2-րդ համագումարը մերժեց Աղրբեջանի կառավարության և թուրքական զորքերի հրամանափառության կողմից ներկայացված՝ պահանջը՝ մինել Աղրբեջանի կազմի մեջ⁴⁸; 1918թ. սեպտեմբերի 20-ին 3-րդ համագումարը հրաժարվեց կարարել թուրքական հրամանափառության կարուկ պահանջը՝ զինաթափվել և մինել Աղրբեջանի կազմի մեջ⁴⁹; 1919թ. փետրվարի 19-ին 4-րդ համագումարը մերժեց աղրբեջանական կառավարության վերջնագիրը (ուղիմափումը) Աղրբեջանական Հանրապետության իշխանության ճանաչման մասին⁵⁰; 1919թ. ապրիլի 23-ին 5-րդ համագումարը կարուկ մերժմամբ պարախանեց նույն պահանջով աղրբեջանական կառավարությանը սարարող անգիտական զորքերի հրամանափառության վերջնագրին⁵¹:

Այս դիմակայությունը շարունակվեց մինչև 1921 թվականը, երբ արդեն Խորհրդային Աղրբեջանը՝ Աղրբեջանական ՍՍԴ-ն, պաշտոնապես հրաժարվեց իր պահանջներից «վիճելի» գարածքների հանդեպ (այդ թվում և Արցախ-Ղարաբաղի հանդեպ) Հայկական ՍՍԴ-ի օգտին (1920 թվականի դեկտեմբերի 1-ի Աղրբեջանական ՍՍԴ-ի Շեղկոմի Դեկրետ): 1921 թվականի հունիսի 12-ի Հայաստանի Ժողկոմի խորհրդի Դեկրետով Հայկական ՍՍԴ-ն Ղարաբաղը հոչակեց իր գարածքի անբաժանելի մաս⁵²: Դրանով իսկ ամրագրվեց Արցախ-Ղարաբաղի իրավաբանական պարկանելիությունը Հայկական ՍՍԴ-ին:

⁴⁸ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. 25-26.

Хуршудян Л. указ. соч. - С. 10.

⁴⁹ Хуршудян Л. указ. соч. - С. 10.

⁵⁰ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. 79-80, 117-120.

Хуршудян Л. указ. соч. - С. 12.

⁵¹ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. 162-164.

Хуршудян Л. указ. соч. - С. 14.

⁵² Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. 600-608, 623-637. Хуршудян Л. указ. соч. - С. 19-29, 31-32.

Այսպիսով, երկու պետությունների իրավասու մարմինների կողմից հայդարարվեց և իրավաբանորեն ձևակերպվեց միջազգային համաձայնագիր՝ կամավոր հայդարարված հոչակագրերի միջոցով: Ըստ Եռլյան, դա նշանակում էր, որ Աղրբեջանի կողմից սանձազերծված գարածքային վեճը սպառված է:

Սակայն հետվագայում պարզ դարձավ, որ այս փասովը չէր կարելի դիմարկել որպես արդարության վերջնական հաղթանակ, քանի որ հետվագայում քաղաքական դիրքորոշումներում որոշ փոփոխությունների ուժով, Աղրբեջանը, գործադրելով իր դիմանագիրության «հնարամիք» միջոցները, խաղալով բոլշևիկյան Ռուսաստանի զգայալարերի վրա, որը մոլեգնությամբ գարված էր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գաղափարով, հասավ Արցախ-Ղարաբաղի կարգավիճակի վերանայմանը. 1921 թվականի հուլիսի 5-ի ՈԿԿ (ք) ԿԿ Կավերյուրոյի Որոշմամբ Արցախ-Ղարաբաղը արհեստականորեն միացվեց Աղրբեջանին⁵³: Արհեստականորեն՝ որովհետև հաշվի չէր առնվել այդ գարածքի պարմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի կամքը՝ գիտել հայկական պետականության ուղեծրում⁵⁴:

Որոշումը դարձավ Աղրբեջանին Արցախ-Ղարաբաղի բռնի վարչական ենթակայության հիմքը, որով պայմանավորվեց արցախահայության ճակարագրի 70 գարին (1921-1991թ.թ.թ.):

Այսպիսով, Արցախ-Ղարաբաղի գարածքը ոչ իրավաչափ, բռնի կերպով միացվեց Աղրբեջանին, և դրանով հերթական անգամ խաթարվեց հայ ժողովրդի ազգային և գարածքային միասնությունը:

Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի Կավերյուրոյի Որոշումը հենց

⁵³ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. XVIII-XIX, 30-40, 640-651.

⁵⁴ Нагорный Карабах в 1918-1923 г.г. указ. кн. - С. 190-197.

